

–Ի՞նչ պատասխանեմ. ես գիտե՞մ ինչ խօսեցան: Երեսփոխանին մեկը դուրս ելած մեկուն կաօռար ըսելով, թե ես քեզի պես ազգին ստակները կերած չեմ եւ քեզմէ աղէկ օրէնք գիտեմ... աղէկ օրէնք գիտնալն ստակ չըներ, մարեան անանկ մէջ կկլլեցունեն որ... այսօր ինչո՞ւ համար քե՛ֆայ չկար:

–Մնաք բարով:

–Երթաք բարով. գիշերը եկուր նարտ խաղանք:

–Տեղս հեռու է, մնաք բարով:

Վերի թաղին իգական սեռը գեղեցիկ է, բայց արական սեռն այդ գեղեցկութենէ զրկուած է: Իգական սեռին մէջ բամբասանքն այն աստիճան յառաջ գնացած է, որ եթէ ուրիշ մը բամբասելու համար նստին՝ շաբաթ մը հազիւ կրնար լմնցունել: Հոս կիներն պատուհաններու առջեւ կը նստին եւ փողոցէն անցնողին հասակին, քթին, մօրուքին, հագուստին վրայ դիտողութիւններ կ'ընեն: Կիները հոս երկու գլխարկով եկեղեցի կ'երթան, թեպէտեւ մէկ գլուխ ունին: Գլխարկին մէկն իրենց գլուխը կը դնեն եւ միւսն սպասաւորն կտանի իրենց ետեւէն: Եկեղեցոյ մէջ գլխարկը կ'փոխուի: Կիներուն գլուխներն այնքան փոքր են, որ հիմակուան գլխարկներէն հատ մը բաւական էր չորս կնկան գլուխ գոցել՝ եթէ սովորութիւն ըլլար չորսօճիինց հոգիի մէկ գլխարկ դնելը: Նորածնութիւնը հոս կ'պաշտուի: Եէնի մահալեցուհին Սէլամսըզ կ'երթայ եւ անկէ հագուստի նոր ձեւեր կը գողնայ:

Վարի թաղն հասարակապետական է: Երիտասարդութեան մէջ երբեմն շարժում կը տեսնուի, բայց այդ շարժումն միշտ ապարդիւն կ'մնայ. վասնզի միապետութիւնն թող չտար, որ երիտասարդութիւնը գործէ:

Այս թաղին մէջ ալ ընկերութիւններ հաստատուած եւ կործանուած են. թեպէտեւ այժմ չգիտենք, թէ ընկերութեան մասին ի՞նչ վիճակի մէջ է, սակայն դիւրին է գուշակել, որ կա՛մ ընկերութիւն մը կազմուելու վրայ է կամ ընկերութիւն մը կործանուելու վրայ:

Երիտասարդութեան մէջ մաս մ'ալ կայ, որ ինքզինք ձայնաւորութեան տուած է եւ աղուոր խաղեր երգելով՝ պօռալ կ'փափաքի. այս մասին կարծիքն այն է, թէ գեղեցիկ ձայնով խաղ կանչելն մեծապէս կնպաստէ ազգային յառաջադիմութեան եւ թե՛ եթէ քիչ մ'ալ օղի կամ գինի խմելով խաղեր կանչուին՝ ազգին վերականգման գործը դիւրացած կը համարուի: